ՍՈՖԻ ԹՈՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԻԿԻ

Ծնվել է 22.05.1992թ.-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում:

1999-2009թթ. սովորել է Արթիկ քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

2009-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, իսկ 2013-2016թթ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում:

24.08.2013-27.09.02014թթ. աշխատել է «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ում՝ որպես կրտսեր իրավաբան:

03.02.2015-06.07.2016թթ. աշխատել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես քննիչ, իսկ 06.07.2016-03.11.2018թթ.՝ նույն բաժնում՝ որպես ավագ քննիչ:

07.11.2018թ.-ից առ այսօր աշխատում է «Սթրոնգ Փարթներշիփ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

Մասնակցել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում լեզվի կուրսերի (B2 մակարդակ) և «Քրեական դատավարությունը, քրեական իրավունքի պատմությունը» թեմայով սեմինարի, ինչպես նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում «Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ» կազմակերպության կազմակերպած «Գերմանական իրավունք» թեմայով ամառային դպրոցին:

Ստացել է «Հազարամյակի զարգացման նպատակները և երիտասարդությունը» ծրագրի վկայագիր:

05.10.2016թ.-ին ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանի կողմից ստացել է պատվոգիր՝ մասնագիտական բարձր պատրաստվածություն ցուցաբերելու, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ձեռք բերած հաջողությունների համար, իսկ 02.03.2016թ.-ին ՀՀ ՔԿ նախագահի կողմից ստացել է պատվոգիր ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու, աշխատանքային հաջողությունների համար:

Մասնակցել է Ամերիկյան համալսարանի տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի կողմից անցկացված «Ընտրարշավի կառավարման կլոր սեղան» և Ամերիկյան համալսարանում անցկացված «Դատական ռեֆորմների հեռանկարների վերաբերյալ սեմինար ՀՀ արդարադատության նախարարի հետ» կոնֆերանսներին: